

[ԱՆՎԵՐՆԱԳԻՐ. ՎՐԱՅ ԱՐՎԵՍՏԱԳԵՏՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ]

Մեր անցյալի պատմիչները, աշխարհագրագետները, հնագետներն ու արվեստագետները իրենց աշխատությունները ստեղծելիս Տայքը ճանաչել են որպես հայկական երկիր, նրա հուշարձանները՝ հայ արվեստի գործեր: Այժմ էլ հայ արվեստագետները մնում են այդ համոզման, և ոչինչը նրանց մեջ այդ կապակցությամբ տարակուսանք չի հարուցում: Դատելով իրենց գործերից, այդ նույն համոզմանն են նաև եվրոպական, ռուսական և, ընդհանրապես օտարազգի գիտնականներն ու հետազոտողները:

Որոշակի մեզ համար աննպաստ հանգամանքների բերումով հայ արվեստի պատմությամբ զբաղվողները մոտ անցյալում ի վիճակի չեն եղել մեկնել Տայք (և ոչ միայն Տայք), չեն կարողացել տեղում հետազոտել հայ կուլտուրայի մեծաքանակ և բարձրարվեստ կոթողները: Հայտնի է նաև, որ մոտ անցյալում ասպարեզից հարկադրաբար հեռացել են մասնագետներ, որոնք ի վիճակի պիտի լինեին ոչ միայն անձամբ զբաղվել քննարկվող հարցով, այլև այսօրվա համար պիտի ստեղծեին արվեստի գործիչների մի նոր սերունդ, որի սակավությունը այնպես խիստ զգացվում է այժմ:

Մեր օրերում գործող արվեստի հիմնարկները, որ ծավալով փոքր են ու վտիտ, և աշխատողները՝ թող ներվի ասել, բավական երկչուտ, զբաղվում են մատչելի գործերով, իսկ այն ամենը, որ գտնվում է մեր սահմաններից դուրս և կորստի ենթակա է, որ պիտի դառնա անմիջական հետազոտությունների առարկա, հրատարակությունների նյութ՝ ըստ էության մատնված է մոռացության:

Այս իմաստով մեր վրաց արվեստակիցները, որ անտարակույս գտնվում են անհամեմատ բարվոք պայմաններում, մեծ աշխատանք են կատարել և այժմ էլ կատարում են անցյալ նյութական կուլտուրայի, ճարտարապետության կոթողների ուսումնասիրության, մոտ անցյալում կուտակված նյութի մշակման գծով: Նրանք պարբերաբար հրատարակում են մենագրություններ, տեսական բնույթի աշխատություններ և այդ ամենը պրոպագանդում են, դարձնում ժողովրդի սեփականություն ու


ոչ միայն մեր երկրի, այլ նաև նրա սահմաններից դուրս՝ եվրոպական շրջաններում, թարգմանաբար: Ահա այսպիսի ձեռներեցությունն ու գործնականությունը միայն գովեստի կարող է արժանի լինել:

Այս ֆոնի վրա, ցավոք այդ միջավայրից որոշ արվեստագետներ, իրենց հետազոտությունների շրջանակները լայնացնելով, ընդգրկում են հուշարձաններ, որոնք պատկանում են ոչ իրենց ժողովրդին, մի բան, որ իհարկե ընդհանրապես պախարակելի չէ, սակայն կոնկրետ դեպքում անթույլատրելին այն է, որ ուսումնասիրության նյութ դարձրած ամեն հուշարձան վերագրում են իրենց, փաստորեն սեփականում այն, ինչը պատկանում է ուրիշին: Այդ կարգի հետազոտողներն իրենց արարքով անհարմար վիճակի մեջ են դնում նախ իրենց և ապա նրանց, ովքեր ստիպված մտնում են կոնֆլիկտի մեջ, երբևէ պաշտպանելու սեփական ժողովրդին պատկանող կուլտուրայի արժեքները:

Նկատելի է, որ ողջ վերոհիշյալը կատարվում է մեթոդիկ, թվում է՝ մշակված պլանով. այսպես՝ մեկը գրում է մի հուշարձանի վերաբերյալ, որպես հիմք իր տեսության՝ բերում անձնական ենթադրություններ: Երկրորդը նույն հուշարձանի վերաբերյալ գրում է, որպես հիմք վկայակոչում նախորդին, նրա եզրակացությունը: Երրորդը նույն հուշարձանի մասին գրելով, ոչ մի վկայակոչման և հիմնավորման կարիք չի զգում, չի հիշատակում ոչինչ, որը որևէ չափով առիթ դառնար վերհիշելու քննարկվող հուշարձանի երբեմնի պատկանելիությունը: Այս բոլորից հետո ընդհանուր կրակի տակ է վերցվում ամեն ոք, ով կասկածի է ենթարկում կեղծ հիմքի վրա ստեղծված տեսությունը, փորձում ասել անաչառ գիտնականի խոսք:

Ահավասիկ մի քանի օրինակ: Ե. Թաղաիշվիլու «Բանա» աշխատության մեջ, որ լույս է տեսել դեռևս 1909 թվականին, հիշվում է Կաղզվանի մոտ գտնվող Չանգլի գյուղի եկեղեցին: Այս եկեղեցու գմբեթի կազմությամբ Թաղաիշվիլին փորձում է հիմնավորել Բանակ տաճարի Կալգինի վերակազմած գմբեթաթմբուկի ներսում բոլորակ սյունասրահի գոյության հավանականությունը: Ե. Թաղաիշվիլու հաջորդ, 1924 թվականին հրատարակված «Ալբում վրաց ճարտարապետության» աշխատության մեջ առանց որևէ

մեկնաբանության, որպես վրաց ճարտարապետության հուշարձան հրատարակվում են Չանգլի գյուղի եկեղեցու նյութերը: Հետագայում ճարտարապետության պատմությանը ու տեսությանը զբաղվողներն առանց այլևայլության Չանգլին դիտում են Ե. Թաղախիշվիլու տեսանկյունով:



Նկ. 1-2 – Չանգլի գյուղի (Եղեգնամոր) եկեղեցու արտաքին տեսքը և գմբեթաթմբուկը

Ե. Թաղախիշվիլու հրատարակած մի քանի գործերում բազմաթիվ են այն հուշարձանները, որոնք Չանգլիի օրինակով սեփականվել են:

Այս [20-րդ] դարի առաջին տասնամյակներում հայ ազգաբնակչությունից դատարկված Արևելյան և Արևմտյան Հայաստանում կանգուն կամ ավերակ վիճակում գտնվող հուշարձանները կան ու երբեք չեն դադարել իրենց երբեմնի տերերին պատկանելուց: Հետևաբար, 1917 թվականին տվյալ վայրերով անցած Ե. Թաղախիշվիլու

հնագիտական արշավախմբի կողմից հնագիտությանը վերաբերող հավաքած նյութերը չեն կարող դիտվել որպես վրացական ճարտարապետության հուշարձաններ, անկախ այն բանից, որ այդպիսիք տեղ են գտել զանազան հրատարակություններում ու հեղինակավոր հեղինակների աշխատություններում: Մանավանդ, որ այդ հուշարձանները կերտող ժողովուրդը այդ ժամանակներում իսպառ չոչնչացվեց և այժմ ապրում ու բարգավաճում է:




Նկ. 3 – Տայքի Բշխան եկեղեցին՝ Ներսես կաթողիկոսի եպիսկոպոսանիստ տաճարը (լուս. Զավեն Սարգսյանի)

Մի ժամանակ Ե. Թադախիշվիլին գրում էր, որ Մերչուլը մեծ գովեստով էր խոսում Ներսեսի կառուցումների մասին իր հայրենի Տայքում, որ նրա կառուցած եպիսկոպոսանիստ տաճարը նորոգել և նորից վերականգնել են 9-րդ և 11-րդ դարերում, անփոփոխ պահպանելով արևելյան աբսիդը՝ ներքնամասի սյունակամարաշարով: Այժմ, դեռևս 7-րդ դարում Ներսեսի կառուցած հայկական եկեղեցու դրվագները հրատարկվում են որպես վրացական հուշարձաններ: Ինչպես Գ. Չուբինաշվիլին, այնպես էլ Վ. Բերիձեն իրենց նոր աշխատություններում հրատարակում են Ներսեսի կառուցումների մնացորդները, առանց Ներսեսին հիշելու: Այս նշանակում է, որ այդ աշխատությունների հեղինակները օրը ցերեկով սեփականում են այդ հուշարձանը, միաժամանակ իրենց անպատշաճ վերաբերմունքով մոռացության մատնում միջնադարի շատ ականավոր դեմքերից մեկին:


Դեռևս անցյալ հարյուրամյակի առաջին կեսին հռչակավոր հետազոտող Դյուբուան (Դյուբուա դե Մոնպերե), հայտնաբերեց և հրապարակեց Վրաստանի Գորիի մոտ գտնվող Աթենի տաճարի կառուցող հայազգի ճարտարապետի հայերեն վիմափոր արձանագրությունը. «Ես Թողոս Շի[ն]ող սրբոյ եկեղե[ցին]»: Մի շարք գիտնականներ հավաստեցին Դյուբուայի հայտնագործության իրողությունը, այդ թվում և Ի. Ջավախովը: Գ. Չուբինաշվիլին «Ջվարիի տիպի հուշարձաններ» աշխատության մեջ այդ արձանագրությունը հիշելով, այնուամենայնիվ տեքստը գրքում չտեղադրեց: Հետագայում գտնվեցին չարագործներ, որոնք հուշարձանի այդ եզակի արժեք ներկայացնող արձանագրությունը հուշարձանի վրայից երկաթե գործիքներով տաշեցին, թողնելով խղճուկ հետքեր միայն: Հուշարձանին փակցված մետաղե տախտակի վրա ձուլածո տառերով գրված է ամեն բանի մասին, սակայն չկա կառուցող ճարտարապետի՝ Թողոսի անունը կամ նրա ով լինելու մասին որևէ խոսք: 1962 թ. լույս տեսած Արվեստի համառոտ հանրագիտարանի վրացական բաժնում թվարկված 27 ականավոր ճարտարապետների ցանկում չկա Թողոսի անունը, հողվածի հեղինակային խմբի խորհրդատուն եղել է Գ. Չուբինաշվիլին: «Ճարտարապետության համընդհանուր պատմության» երրորդ հատորում, որը լույս է տեսել 1966 թ., «Վրաստանի

ճարտարապետությունը» 75 էջանոց հոդվածի հեղինակ Գ. Չուբինաշվիլին խոսում է Աթենիի, նրա հեղինակի մասին որպես ստեղծագործող, տեղադրում է տաճարի ներքին տեսքն արտահայտող լուսանկար և այնուամենայնիվ չի գրում Թողոսի անունը, չի հայտնում նրա ով լինելը:



*Նկ. 4 – Աթենի սբՄիոնն եկեղեցին (լուս. Architectural Monuments of Georgia
N. Janberidze, I. Tsitsishvili, 1996 գրքից)*

1967 թ. լույս է տեսել Վախթանգ Բերիձեի «Վրացական ճարտարապետություն» նոր աշխատությունը, որտեղ տեղադրված են տաճարի արտաքին ու ներքին տեսքերն արտահայտող մեծադիր լուսանկարներ, նվիրված է առանձին անոտացիա, սակայն կառուցող Թողոսի անունը նույնպես չկա (թեպետ և նույն հեղինակի 1948 թվականին լույս տեսած «Վրաստանի ճարտարապետությունը» փոքրածավալ աշխատության մեջ հիշվում է Թողոսը, ինչպես երևում է, հեղինակն իր այդ քայլը այժմ զոջում և աշխատում է «ուղղել»):



Նկ. 5 – Աթենի եկեղեցու ճարտարապետ Թողոսակի քերված արձանագրությունը (լուս. Մամվել Կարապետյանի)

Թեպետ Աթեն տաճարը չի գտնվում Տայքում և անմիջականորեն չի առնչվում սույն աշխատության նյութին, սակայն այստեղ բերվում է, նկատի ունենալով, որ նրա շուրջը տեղի ունեցող երևույթները, ինչպես տեսնում ենք, իրենց բնույթով, ըստ էության չեն տարբերվում Տայքի հուշարձաններին նվիրված աշխատություններում տեղ գտած հոռի տեսություններից:

Ահա այսպես, հին հրատարակությունները սպառվել են, նորերում չկա Թողոսի անունը և ով լինելը, ժողովրդի նոր սերունդը չգիտի այն, ինչ որ պահպանել էր նյութական կուլտուրայի հուշարձանը: Այս, աներկբա, պատմության դիտավորյալ աղճատում է, որ չի պատշաճում ժամանակակից սովետական գիտությանը:

Այդ հետազոտողներն իրենց աշխատություններում, որևէ տաճարի ճարտարապետական ոճական (ազգային) պատկանելիությունը որոշելու համար բավարար հիմք էին համարում շինարարության առաջին կառուցումից տասնամյակներ, նույնիսկ հարյուրամյակներ անց քարակերտ պատերի և ներքին սվաղի վրա դրոշմված արձանագրությունները, առանձին բառերն ու տառերը և այն էլ իրականացված սև ու կարմիր ներկով, երբեմն գրված անկանոն ու անկարգ և անպատշաճ գրագիտությամբ (տես՝ Պարխարի արձանագրություններ):




Նկ. 6 – Պարխարի բազիլիկ եկեղեցին, Տայք (լուս. Զավեն Սարգսյանի)

Այդ հետազոտություններում օրինական կասկած են հարուցում արձանագրությունների, գրերի և անունների արտանկարումների որոշ մասը, դրանցում եղած, հատկապես նշանակալից հատվածների լուսանկարները չբերելու պատճառով: Օրինակ, Ե. Թաղաիշվիլին Խախու վանքը վրացական հուշարձան համարելու համար իր աշխատության մեջ ներկայացնում է գմբեթաթմբուկի վրայով անցնող դեկորատիվ կամարաշարի սյունների խարիսխների վրայի գրերի նմանվող խզբզանքների արտանկարները, այդպիսիք կարգավորելով նմանեցնում է որոշակի տառերի և ենթադրաբար ստանում գրեթե անսովոր անուններ: Եվ ահա դրանց, այդ խզբզանքների լուսանկարները չի բերում, դրանց վերծանմանը մասնակից չի դարձնում ընթերցողին, որը կցանկանար սեփական աչքերով տեսնել, համոզվել, թե որքանո՞վ այդ ամենը արժանահավատ է՝ ճշմարիտ: Ե. Թաղաիշվիլու արշավախմբի անդամները տաճարին կոթնած կիսաարմատախիլ ծառի վրայով առանց դժվարության բարձրացած են եղել կտուրը, մոտեցել են գմբեթաթմբուկին, հետևաբար վերոհիշյալ «գրերի» լուսանկարահանումը կապված չի եղել որևէ դժվարության հետ:



Նկ. 7-8 – Խախու եկեղեցին, Տայք (լուս. Ջավեն Մարգարյանի)

Այդ նույն ձևով Ե. Թադաիշվիլին իր աշխատության Օշկվանքին նվիրված գլխում լուսանկարի փոխարեն տեղադրել է շինարարական աշխատանքների կառավարիչ «Գրիգոր»-ի անվան ֆաբրիմիլեն, ցավոք այդ պակասը չի ծածկում 12 տող ունեցող, նույնպես ներկով գրված արձանագրության բերված լուսանկարը, իհստ անընթեռնելի լինելու պատճառով:



Նկ. 9 – Օշկանք, Տայք (լուս. Զավեն Մարգարյանի)